ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Մաստարա 4 փ.շ.10
Հեռ.0249-97-2-31

ՈՐՈՇՈՒՄ
21 նոյեմբերի 2014 թվական N 20

ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մաստարա համայնքի ավագանու 21.11.2014թ.-ի թիվ 7 նիստի օրակարգը.

1.Մաստարա համայնքի ավագանու 11.07.2014թ.-ի թիվ 11, 30.07.2014թ.-ի թիվ 13 որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին:

2.«Մաստարայի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին:

Ավագանու անդամներ	Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Հմայակ Պողոսյան			
Գուրգեն Չոփիկյան			
Արշակ Բավեյան			
Սարգիս Գրիգորյան			
Սուրեն Վարդանյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
գ.Մաստարա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Մաստարա 4 փ.2.10
հեռ.97-2-31

ՈՐՈՇՈՒՄ
21 նոյեմբերի 2014 թվական N 21

ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11.07.2014Թ.-Ի ԹԻՎ 11, 30.07.2014Թ.-Ի ԹԻՎ 13 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

1.Ուժը կորցրած ճանաչել Մաստարա համայնքի ավագանու 11.07.2014թ.-ի թիվ 11, 30.07.2014թ.-ի թիվ 13 որոշումները:

Ավագանու անդամներ	Կողմ-5	Դեմ-0	Ձեռնպահ-0
Հմայակ Պողոսյան			
Գուրգեն Զոփիկյան			
Արշակ Բավեյան			
Սարգիս Գրիգորյան			
Սուրեն Վարդանյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
գ.Մաստարա

5.Ընկերության կողմից օգտագործվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքերն ու շինությունները, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՈԱԿ-ին դրանց նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Մաստարա համայնքի ղեկավարի հետ կնքված պայմանագրի հիման վրա:

6.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

7.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Մաստարա համայնքի ղեկավարին:

8.«Մաստարայի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին. ընկերության պարտատերերի առկայության դեպքում բոլորին օրենքով սահմանված կարգով ծանուցել ընկերության վերակազմավորման մասին:

Ավագանու անդամներ Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հմայակ Պողոսյան

Գուրգեն Զոփիկյան

Սուրեն Վարդանյան

Արշակ Բավեյան

Սարգիս Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2014թ. նոյեմբերի 21
գ.Մաստարա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՏԱՐԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ.Մաստարա 4 փ.շ.10
հեռ.97-2-31

ՈՐՈՇՈՒՄ
21 նոյեմբերի 2014 թվական N 22

«ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ «ՄԱՍՏԱՐԱՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 24-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.«Մաստարայի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ ՓԲԸ/ վերակազմավորման ձևով վերակազմակերպել «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ ՀՈԱԿ/:

2.Հաստատել «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման կարգը, պայմանները, տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի մարման կարգը.

3.Հաստատել «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության գույքի և գույքային իրավունքների՝ «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցման ակտը, որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.

4.Հաստատել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված «Մաստարայի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմը՝ համաձայն Հավելված 1-ի: